ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն ԽՈՒԴԱԹՅԱՆ,

Հեծանվորդների, սիրողական հեծանվասպորտի և սպորտային տուրիզմի միջազգային ֆեդերացիայի նախաձեռնությամբ և Ապարանի համայնքապետարանի աջակցությամբ 2026 թվականի օգոստոսի 22–23-ին Ապարան համայնքում կանցկացվի **«TOUR D'ARAGATS / ԱՐԱԳԱԾԻ ՇՈՒՐՋԸ 2026»** հեծանվասպորտի միջազգային երկրորդ առաջնությունը:

Նախագիծը նպատակ ունի նպաստել Հայաստանում հեծանվասպորտի և սպորտային տուրիզմի զարգացմանը, խթանել առողջ ապրելակերպը, ակտիվ հանգիստը և մարզային զբոսաշրջությունը, ինչպես նաև ձևավորել միջազգային ճանաչում ունեցող ամենամյա մարզական միջոցառում:

Հաշվի առնելով մարզպետարանների և համայնքների կարևոր դերը մարզային կյանքի ակտիվացման և բնակչության իրազեկման գործում՝ **խնդրում ենք Ձեր աջակցությունը**՝ առաջարկելով Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին և համայնքապետարաններին իրենց պաշտոնական տեղեկատվական հարթակներով և սոցիալական ցանցերի էջերով տարածել առաջնության վերաբերյալ տեղեկատվությունը և կից ներկայացվող տեսահոլովակի հղումը:

Համոզված ենք, որ տեղեկատվության լայն տարածումը կնպաստի Հայաստանի բոլոր մարզերից, հատկապես համայնքներից, առավել մեծ թվով հեծանվորդների, երիտասարդների և սպորտի սիրահարների մասնակցությանը, ինչպես նաև կխթանի ներքին զբոսաշրջության զարգացումն ու համայնքների ներգրավվածությունը այս միջազգային նախաձեռնությանը:

Կից ներկայացնում ենք նախագծի տեղեկատվական փաթեթը և տեսահոլովակի հղումը:

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում համագործակցության և ցուցաբերելիք աջակցության համար:

Հարգանքով՝ Արման ԱՆՏՈՆՅԱՆ

Հեծանվորդների, սիրողական հեծանվասպորտի և սպորտային տուրիզմի միջազգային ֆեդերացիայի հիմնադիր նախագահ

22.07.2026 թ.

ՏԱՐԱԾՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարածվող տեսահոլովակի հղումը.

https://www.facebook.com/reel/1000873802737345

Կից տարածվող ինֆո.

Օգոստոսի 22/23 Ապարանում կմեկնարկի **TOUR D'ARAGATS 2026 ԱՐԱԳԱԾԻ ՇՈՒՐՋԸ** հեծանվասպորտի միջազգային երկրորդ առաջնությունը՝ 3 միլիոն ՀՀ դրամ մրցանակային ֆոնդով, որը նախատեսված է սիրողական և գործող մարզիկների՝ տղամարդկանց և կանանց մրցապայքարի 5 խմբերի համար.
• Սիրողական տղամարդիկ՝ 17–35 տարեկան
• Սիրողական տղամարդիկ՝ 36–50 տարեկան
• Սիրողական տղամարդիկ՝ 51 տարեկան և բարձր
• Սիրողական կանայք՝ 17 տարեկան և բարձր
• Մարզիկներ, ովքեր 2022–2026 թվականներին (վերջին 5 տարիներին) մասնակցել են իրենց պետության առաջնություններին:
Բոլոր 5 խմբերի համար սահմանված են հետևյալ մրցանակային տեղերը՝
• 1-ին տեղ – 300,000 ՀՀ դրամ
• 2-րդ տեղ – 200,000 ՀՀ դրամ
• 3-րդ տեղ – 100,000 ՀՀ դրամ
4–7-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կստանան հատուկ պատվոգրեր, իսկ մնացած մասնակիցները՝ մասնակցության հավաստագրեր:
• Էլեկտրական հեծանիվներով մասնակիցները կարող են մասնակցել ոչ մրցակցային ձևաչափով՝ որպես զբոսաշրջիկներ:

Մանրամասներն ու գրանցման հղումն այստեղ.

https://www.facebook.com/events/1591935478765002

Հեռ. 091 566 001